

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԿՈՄԻՏԵ)
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ
ՊԱՇՏՈՆԸ ԶՔԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԲԱԺԻՆ) ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Կոմիտեի **ներքին աուդիտի բաժնի առանձին գործառույթներ համակարգող խորհրդականի** պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական աշխատանք կատարողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակին կարող եք ծանոթանալ [այստեղ](#):

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- 1) բարձրագույն կրթություն:
- 2) ավիացիայի ոլորտում առնվազն 5 (հինգ) տարվա աշխատանքային ստաժ:
- 3) ՀՀ քաղաքացիական ավիացիայի ոլորտը կանոնակարգող օրենսդրական ակտերի տիրապետում.
- 4) որակի ապահովման միջազգային ստանդարտների, ավիացիայի ոլորտում միջազգային ստանդարտների, եվրոպական կանոնակարգերի և հրահանգների պահանջների տիրապետում,
- 5) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- 6) անգլերենի և հայերենի ազատ տիրապետում,
- 7) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Աշխատավարձի չափը՝ 314 165 (երեք հարյուր տասնչորս հազար հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ:

Աշխատանքի վայրը՝ քաղ. Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, Կոմիտեի վարչական շենք:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (դիպլոմների),

վկայականի (վկայականների), մասնագիտական պատրաստվածության կամ դասընթացներին մասնակցելու վերաբերյալ սերտիֆիկատի (սերտիֆիկատների), վկայագրի (վկայագրերի), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք (տեղեկանքներ) համապատասխան մարմնից (մարմիններից)) պատճենները բնօրինակների հետ միասին,

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

- երկու լուսանկար 3x4 սմ չափսի,

- անձնագրի և հանրային ծառայության համարանիշը հավաստող փաստաթղթի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ անձնակազմի կառավարման բաժին՝ ներկայացնելով անձնագիր, կամ էլեկտրոնային փոստի միջոցով (հեռ. 060-43-42-61, էլ. փոստ՝ shoushanik.mkrtchyan@gdca.am):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 17.15-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: